ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ՝ 947.925+72
DOI: 10.54503/2953-8122.2023.15(2)-173

Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՏԱՃԱՐԻ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԵԳ ՀԱՍՐԱԹՅԱՆ*

Վաղ միջնադարում ճարտարապետությունը Հայաստանում բուռն զարգացում է ապրում: Ստեղծվում են եկեղեցական շենքերի մի շարք ինքնատիպ հորինվածքներ, որոնցից են հռիփսիմեատիպ եկեղեցիները: Այս տիպի եկեղեցիներ կառուցվել են ոչ միայն Հայաստանի և Արցախի տարածքում, այլ նաև Վրաստանում: Սբ. Հռիփսիմե եկեղեցին գտնվում է Վաղարշապատ քաղաքի հյուսիսարևելյան հատվածում՝ բարձունքի վրա՝ Հռիփսիմյան կույսերի նահատակության վայրում: Ըստ շինարարության ժամանակակից Սեբեոս եպիսկոպոսի՝ տաճարը կառուցվել է Խոսրով Աբրեուզի կառավարման 28-րդ տարում՝ 618թ.: Շինարարության մասին արձանագրությունները երկուսն են, որոնք հիշատակում են Կոմիտաս Աղցեցու անունը, որը տաճարի կառուցողն է:

Տաճարն ունեցել է բազմաթիվ վերակառուցման և վերանորոգման փուլեր՝

1. 1653 թ.՝ Փիլիպոս կաթողիկոսի օրոք, վերանորոգվել է ծածկը, երեսպատման սալերի զգալի մասը, մուտքերը, բեմը, ավանդատները, արևելյան ճակատին կից կառուցվել է գավիթ:
2. 1790 թ.՝ Ղուկաս կաթողիկոսի օրոք, գավթի վրա կառուցվել է զանգակատուն:
3. 1898 թ.՝ Խրիմյան կաթողիկոսի օրոք վերանորոգվել են պատերը, երեսպատումը, հատակը, ցոկոլը:

Այն արտաքուստ հատակագծում արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված ուղղանկյուն է՝ 22.55 մ - 17.72 մ չափերով:

Մեր կողմից փորձ է արվել, օգտագործելով ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաները, վերստեղծել Սբ. Հռիփսիմե տաճարի սկզբնա-

---

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի ավագ գիտաշխատող, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դասախոս, ճարտարապետության թեկնածու, դոցենտ, areghasratyan@mail.ru, հոդվածի ներկայացնելու օրը՝ 01.02.2023, գրախոսելու օրը՝ 10.03.2023, տպագրության ընդունելու օրը՝ 10.05.2023:

կան հորինվածքը: Իրականացվել է ճակատների չափագրում ֆոտոգրամ-մետրիկ եղանակով, որի հիման վրա ստեղծվել է եռաչափ տեսքը: Տաճարի գմբեթի տեսական վերակազմության համար ընդհանուր առմամբ հիմք են ընդունվել Ն. Տոկարսկու և Ա. Երեմյանի կողմից իրականացված 1946 թ., իսկ շքամուտքերի համար Ա. Երեմյանի կողմից արված 1955 թ. վերակազմությունները: Սակայն մեր իրականացրած վերակազմությունում կան որոշակի տարբերություններ: Ներկայիս արևելյան և հյուսիսային ճակատների աբսիդներն արտաքուստ և խորշերը, ըստ Ա. Երեմյանի, հետագա վերակառուցման արդյունք են: Սակայն սա ընդամենը հեղինակի ենթադրությունն է, և որևէ համոզիչ հիմնավորում չի ներկայացվել: Իսկ գմբեթը, որն իրականացված է ութանիստ և ութ լուսամուտներով, չունի իր նախադեպը, քանի որ Հայաստանում վաղ միջնադարում կառուցված ութանիստ գմբեթներն ունեցել են չորս պատուհան: Ըստ մեր տարբերակի՝ տաճարի ներկայիս բոլոր աբսիդները կառուցվել են եկեղեցու հիմնական ծավալի հետ միաժամանակ, և որևէ վերակառուցման ակնհայտ հետքեր չեն նկատվում: Գմբեթն իրականացված է ութանիստ թմբուկով և չորս պատուհաններով: Վեղարը, ի տարբերություն վերը նշված վերակազմության, իրականացված է ոչ թե կղմինդրածածկ, այլ բրգաձև և քարե սալերով ծածկված, ինչպես Օձունի, Ոսկեպարի և Լմբատավանքի գմբեթների վեղարներն են: Վերակազմվել են նաև տանիքների թեքությունները, որոնք բազմաթիվ վերակառուցումների ժամանակ փոխվել էին և աղավաղում էին տաճարի նախնական հորինվածքը: Փոփոխություններից զերծ չեն մնացել նաև պատերի խարիսխները՝ երեսպատվելով տրամատավորված քարե նոր երեսպատման շերտով: Արխիվային լուսանկարների հիման վրա վերակազմվել է նաև տաճարի եռաստիճան ստիլոբատը: Ընդհանուր առմամբ վերացվել են նաև բոլոր շինարարական միջամտությունների հետքերը՝ տաճարին վերադարձնելով երբեմնի սլացիկ և նրբագեղ հորինվածքը:

Բանալի բառեր՝ Սբ. Հռիփսիմե, տաճար, վերակազմություն, գմբեթ, Էջմիածին, վաղմիջնադարյան, դամբարան:

Ներածություն

Վաղ միջնադարում ճարտարապետությունը Հայաստանում բուռն զարգացում է ապրում: Ստեղծվում են եկեղեցական շենքերի մի շարք ինքնատիպ հորինվածքներ, որոնցից են հռիփսիմեատիպ եկեղեցիները: Այս տիպի եկեղեցիներ կառուցվել են ոչ միայն Հայաստանի և Արցախի տարածքում, այլ նաև Վրաստանում: Դրանց թվին են պատկանում Արցախի Մոխրենիս գ. Օխտը դռնի վանքի եկեղեցին (V-VI դդ.), Զորադիրի Ս. Էջմիածին (VI դ.), Այգեշատի Թարգմանչաց վանքի (VII դ.), Ավանի Ս. Հովհաննես (VI դ.), Արամուսի Ս. Նշան (VI դ.

2-րդ կես), Էջմիածնի Ս. Հռիփսիմեի տաճարը, Գառնահովիտի Ս. Գևորգ (VI-VII դդ.), Արծվաբերի Ս. Աստվածածին, Սիսիանի Ս. Գրիգոր, Արծվանիստի Ս. Աստվածածին (բոլորը VII դ.): Հռիփսիմեատիպ եկեղեցիներ կառուցվել են ոչ միայն վաղ, այլ նաև զարգացած միջնադարում՝ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի (X դ.): Այս հորինվածքի լավագույն օրինակը Սբ. Հռիփսիմե տաճարն է, որը նաև չափերով ամենամեծն է:

Հիմնական նյութի շարադրանք

Սբ. Հռիփսիմե տաճարի շինարարության մասին փաստում են համարյա բոլոր վաղմիջնադարյան պատմիչները: Ըստ շինարարության ժամանակակից Սեբեոս եպիսկոպոսի՝ տաճարը կառուցվել է Խոսրով Աբրեուզի կառավարման 28-րդ տարում՝ 618 թ.: Կոմիտաս կաթողիկոսը քանդել է մինչ այդ Սբ. Սահակ կաթողիկոսի կառուցած Սբ. Հռիփսիմեի դամբարանը և տեղում կառուցել ներկայիս տաճարը[1]:

Շինարարության մասին արձանագրությունները երկուսն են: Դրանցից առաջինը գտնվում է արևմտյան ճակատի կենտրոնական պատուհանից վերև, որը ներկայումս ծածկում է զանգակատունը և ներքևից չի երևում[2]: Այդ քառատող արձանագրության համաձայն վանահայր առաջնորդ Կոմիտասը տաճարը կառուցել է ի պատիվ Քրիստոսի սուրբ վկա Հռիփսիմեի[3]: Երկրորդ արձանագրությունը գտնվում է տաճարի ներսում՝ գմբեթարդի կենտրոնում, այն բացվել է 1898 թ. Խրիմյան Հայրիկի կողմից իրականացված վերանորոգման աշխատանքների ժամանակ: Այս եռատող արձանագրությունում կրկին հիշատակվում է Կոմիտաս Աղցեցու անունը, որը տաճարի կառուցողն է[4]:

Տաճարն ունեցել է բազմաթիվ վերակառուցման և վերանորոգման փուլեր՝

1. 1653 թ.՝ Փիլիպոս կաթողիկոսի օրոք, վերանորոգվել է ծածկը, երեսպատման սալերի զգալի մասը, մուտքերը, բեմը, ավանդատները, արևելյան ճակատին կից կառուցվել է գավիթ:

---

[1] **Еремян А.**, Храм Рипсимэ, Ереван, 1955, стр. 23.

[2] Նույն տեղում, էջ 25:

[3] **Հարությունյան Ա.** Ս. Հռիփսիմե վանքը, Ս. Էջմիածին, 2018, էջ 23:

[4] Նույն տեղում, էջ 26:

2. 1790 թ.՝ Ղուկաս կաթողիկոսի օրոք, գավթի վրա կառուցվել է զանգակատուն:
3. 1898 թ.՝ Խրիմյան կաթողիկոսի օրոք՝ վերանորոգվել է պատերի երեսպատումը, հատակը, ցոկոլը[5]:

Սբ. Հռիփսիմե եկեղեցին գտնվում է Վաղարշապատ քաղաքի հյուսիսարևելյան հատվածում՝ բարձունքի վրա՝ Հռիփսիմյան կույսերի նահատակության վայրում:

Այն արտաքուստ հատակագծում արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված ուղղանկյուն է՝ 22.55 մ-17.72 մ չափերով: Հուշարձանի բոլոր ճակատներին առկա են զույգ, հիմքում սեղանաձև խորշեր, որոնք թեթևացնում են խորանների և ավանդատների միջև ընկած պատերի հոծ զանգվածը և ճակատներին հաղորդում են գեղարվեստական արտահայտչականություն: Հյուսիսային և արևելյան աբսիդներն արտաքուստ պատի հարթությունից դուրս են ցցված մոտ 15-30 սանտիմետր:

Աղոթասրահը հիմքում խաչաձև, քառախորան միասնական տարածություն է, առանց առանձին կանգնած կրող տարրերի: Ինտերիերը թե՛ լայնական, թե՛ երկայնական առանցքի նկատմամբ սիմետրիկ է՝ արևելք-արևմուտք ուղղությամբ որոշակի ձգվածությամբ: Այս հորինվածքի բնորոշ առանձնահատկությունն են աղոթասրահի և ավանդատների միջև գտնվող հիմքում ¾ շրջանաձև թվով չորս խորշերը, որոնք վերևում ավարտվում են կիսագնդաձև գմբեթարդով: Ավանդատները չորսն են և ներգծված են եկեղեցու ընդհանուր ուղղանկյուն ծավալի մեջ: Իրենց հորինվածքով բնորոշ են Հայաստանի VI-VII դդ. ավանդատներին: Վերջիններս հատակագծում մոտավորապես 4 մ կողմով քառակուսի են կազմում: Արևմտյան ավանդատների ծածկերն իրականացված են խաչվող թաղերով, իսկ արևելյաններինը՝ անկյուններում չորս տրոմպներով, որոնք կենտրոնում իրար են միանում նույնպես խաչվող թաղերով: Բոլոր ավանդատներն արևելյան պատին ունեն ոչ խոր աբսիդներ, որոնք ներգծված են պատի հաստության մեջ: Լուսավորությունն իրականացված է երկու պատուհաններով: Արևելյան ավանդատների արևելյան պատուհանները բացվում են վերը նշված

[5] **Еремян А.**, Храм Рипсимэ, стр. 66.

աբսիդների միջով: Ավանդատների վերևում կան թաղածածկ թաքստոցներ:

Մուտքերը երկուսն են՝ արևմուտքից և հարավից, վերջիններս ունեցել են պատի հարթությունից առաջ եկած կիսասյունիկներով երկթեք ծածկով շքամուտքեր, որոնք չեն պահպանվել, սակայն հարավային պատին պարզորոշ երևում են երկթեք ճակտոնի հետքերը, իսկ արևմտյան շքամուտքի տեղում հետագայում կառուցվել է զանգակատունը: Արևմտյան պատին՝ զանգակատնից հյուսիս և հարավ, պարզորոշ երևում են ևս երկու մուտքերի հետքեր, որոնք բացվում են դեպի արևմտյան երկու ավանդատները: Մուտքերը ծածկված են բարավորի ուղղանկյուն սալով, որոնց վերևում գտնվում են ավանդատների նույն լայնությամբ պատուհանները: Վերջիններս հետագա վերակառուցումների ժամանակ փակվել են քարե շարվածքով: Նման մուտք կա նաև մեկ այլ հռիփսիմեատիպ եկեղեցու՝ Ավանի Կաթողիկեի արևմտյան պատին, սակայն այս դեպքում մեկն է և բացվում է դեպի հարավարևմտյան ավանդատուն, վերջինս նույնպես հետագայում փակվել է քարե շարվածքով:

Ավագ խորանը լուսավորվել է երեք պատուհաններով, որոնցից երկուսը հետագայում փակվել են: Ավագ խորանի տակ է գտնվում Սբ. Հռիփսիմեի դամբարանը, որի մուտքը հյուսիսարևելյան ավանդատնից է: Այն հատակագծում ուղղանկյուն 2.03մ-3.33մ չափերով թաղակապ սենյակ է, արևելյան պատին կա կիսաշրջան խորան, իսկ արևմտյան պատին՝ խորշ: Կա տեսակետ, ըստ որի՝ դամբարանի մուտքը եղել է անմիջապես բեմի առջևից, և հետագա վերակառուցման արդյունքում այն տեղափոխվել է ավանդատուն: Տեսակետը հիմնավորվում է դամբարանի արևմտյան պատին խորշի և բեմի առջև քարե սալի առկայությամբ, սակայն ուսումնասիրության ժամանակ տաճարի պատերը ներքուստ սվաղված են եղել, որը հետագայում հեռացվել է: Սվաղի տակից բացված քարի շարվածքը միատարր է, առանց վերակառուցման հետքերի, հետևաբար՝ կարելի է ենթադրել, որ Սբ. Հռիփսիմեի դամբարանի մուտքը ի սկզբանե եղել է հյուսիսարևելյան ավանդատան միջով, իսկ վերոնշյալ խորշը եղել է երդիկ դամբարանի լուսավորության և օդափոխության համար, որը հետագայում փակվել է քարե սալով:

Սբ. Հռիփսիմե տաճարի գմբեթն արտաքուստ տասնվեցնիստանի է, որին չորս կողմից հպված են գլանաձև ծավալով և կոնաձև վեղարով փոքր աշտարակներ: Դրանք հավանաբար ծառայել են որպես թաքստոցներ: Վերջիններիս մուտքը գմբեթի ներսի ողջ պարագծով ձգվող պատշգամբից է: Գմբեթը ներքուստ գլանաձև է, որը ձևավորված է տասնվեց կիսաշրջան խորշերով, այն լուսավորվում է տասներկու պատուհաններով; Գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթին իրականացված է իրար հաջորդող երկու շարք տրոմպներով, առաջին շարքում՝ ութական մեծ, երկրորդում՝ տասնվեցական փոքր չափի, որոնք համատեղված են առագաստային անցման հետ և վերևում գոտևորվում են հատակագծում կորագիծ քիվով: Արտաքուստ գմբեթն ակնհայտորեն ավելի մեծ է, քան գմբեթատակ քառակուսին և տեղաշարժված է դեպի արևելք, որի հետևանքով հարավային նիստի պատուհանը սիմետրիկ է եկեղեցու ընդհանուր ծավալի առանցքի նկատմամբ, սակայն տվյալ նիստի առանցքից շեղված է դեպի արևմուտք: Գմբեթի հյուսիսային և հարավային նիստերը 15-20 սանտիմետր դուրս են ցցված գմբեթատակ քառակուսու հարթությունից:

Սբ. Հռիփսիմե տաճարը հայկական վաղմիջնադարյան ճարտարապետության համար առանցքային նշանակություն ունի, հետևաբար՝ այն միշտ եղել է ճարտարապետության ուսումնասիրությամբ զբաղվող ոչ միայն հայ, այլ նաև օտարազգի մասնագետների հետազոտության առարկա:

Շվեյցարացի ճանապարհորդ Դյուբուա դը Մոնպերեն 1839 թվականին Կովկաս այցելության ժամանակ եղել է նաև Էջմիածնում և իրականացրել է Սբ. Հռիփսիմե տաճարի առաջին չափագրումները: Տաճարի ուսումնասիրությամբ զբաղվել են նաև Շախատունյանցը, Բրոսսեն, Շնաազեն, Գրիմը, Կոնդակովը, Ալիշանը, Մառը, Ստրժիգովսկին, Օրբելին, Ռիվոիռան, Բռունովը, Չուբինաշվիլին, Տոկարսկին և այլք:

1931 թ. Թորոս Թորամանյանն ուսումնասիրել և չափագրել է հուշարձանը, հայտնաբերել է որոշ ձևափոխություններ և հրատարակել:

Սբ. Հռիփսիմե տաճարը հանգամանալից ուսումնասիրել է Ալեքսանդրա Երեմյանը, որի արդյունքում 1955 թվականին հրատարակել է «Храм Рипсиме» ծավալուն աշխատությունը:

Թեև տաճարի ուսումնասիրողների մեծամասնությունը գմբեթի կառուցման վերաբերյալ որևէ հստակ տեսակետ չի հայտնել, այնուամենայնիվ կան նաև հակասական տեսակետներ: Մասնագիտական գրականության մեջ առավելապես գերակշռում է այն տեսակետը, որ ներկայիս գմբեթը պատկանում է VII դ. և կառուցվել է տաճարի հիմնական ծավալի հետ միաժամանակ: Սակայն, հակառակ դրան, գմբեթի վերակառուցված լինելուն դեռ ավելի վաղ անդրադարձել է Դյուբուա դը Մոնպերեն՝ 1839 թ. ներկայացնելով տաճարի գմբեթի սեփական վերակազմությունը՝ ութանիստ գմբեթով, դեպի աշխարհի չորս կողմերն ուղղված չորս պատուհաններով, սա թերևս մեզ հայտնի առաջին վերակազմության փորձն է: Գմբեթի վերակառուցված լինելուն անդրադարձել է նաև Ն. Տոկարսկին: Նա գրել է. «Ողջ վերին մասը վերակառուցված է զգալիորեն ավելի ուշ, և նախնական տեսքի մասին կարելի է միայն ենթադրել հարևան Այգեշատի հուշարձանի հետ համադրելով»: Գմբեթի նախնական տեսքի մասին նա նաև գրել է. «Ի սկզբանե թմբուկը հավանաբար ութանիստ է եղել, նորմալ բարձրությամբ, և ողջ եկեղեցին ունեցել է սլացիկ բավականին նրբագեղ տեսք»[6]: Ն. Տոկարսկին և Ա. Երեմյանը նաև իրականացրել են Սբ. Հռիփսիմե տաճարի՝ ինչպես հեղինակներն են նշում, սխեմատիկ վերակազմությունը, որտեղ գմբեթն ութանիստ է, բոլոր նիստերին առկա են պատուհաններ, սակայն բացակայում են շքամուտքերը, իսկ ավագ խորանը լուսավորվում է մեկ պատուհանով[7]: Ըստ Ն. Տոկարսկու և Ա. Երեմյանի՝ այն հետագա վերակառուցումների արդյունք է: 1955 թ. Ա. Երեմյանը «Храм Рипсимэ» աշխատության մեջ ներկայացնում է տաճարի վերակազմության ևս երկու տարբերակ, առաջինում գմբեթն իրականացված է ութանիստ՝ Գառնահովտի եկեղեցու, իսկ երկրորդը՝ տասներկունիստանի՝ Սիսիանի եկեղեցու գմբեթի օրինակով: Երկու դեպքում էլ վեղարը ծածկված է եղել կղմինդրով: Գմբեթի՝ հետագայում վերակառուցված լինելու մասին վկայում են որոշ հանգա-

[6] **Токарский Н.**, Архитектура древней Армении, Ереван, 1946, стр. 87.
[7] Նույն տեղում, էջ 88:

մանքներ: Նախ կառուցվածքային առումով, ինչպես արդեն նշվեց, գմբեթն ավելի մեծ է, քան գմբեթատակ քառակուսին, մի հանգամանք, որն իր նախադեպը չունի: Ինտերիերում առկա են բավական հզոր գմբեթակիր կամարներ, սակայն գմբեթի ծանրությունը չի փոխանցվում վերջիններիս վրա, փոխարենը գմբեթը հենվում է արևելյան և արևմտյան թաղերի, ինչպես նաև հյուսիսային և հարավային գմբեթարդների վրա, իսկ արտաքուստ գմբեթի հյուսիսային և հարավային նիստերը, որոնք դուրս են ցցված գմբեթատակ քառակուսուց, կրում են վերակառուցման ժամանակ հատուկ այդ նպատակի համար իրականացված կամարները: Հորինվածքային առումով գմբեթի թմբուկն անհամաչափ է, թմբուկի բոլոր նիստերն անհավասարաչափ են, պատուհանները չեն գտնվում նիստերի կենտրոններում: Գմբեթն իր հորինվածքով նույնպես բնորոշ չէ VI -VII դդ. հայկական ճարտարապետության ստեղծած օրինակներին, որոնց գմբեթներն ունեցել են վեց, ութ և տասներկու հավասարաչափ նիստեր, բացառություն է միայն Զվարթնոցի տաճարը՝ տասնվեցնիստանի գմբեթով, որը կառուցվել է ավելի ուշ: Իսկ անկյունային աշտարակները նույնպես բնորոշ չեն վաղ միջնադարին: Գլանաձև թմբուկով և կոնաձև վեղարով գմբեթներ կառուցվել են միայն զարգացած միջնադարում՝ IX դարից սկսած: Հետևաբար՝ կարելի է ենթադրել, որ գմբեթը հետագա վերակառուցման արդյունք է: Ըստ Ա. Երեմյանի՝ գմբեթի փլուզման պատճառ կարող էր լինել IX դ. երկրաշարժը: Համաձայն պատմիչների՝ տվյալ ժամանակաշրջանում ամենաուժեղ երկրաշարժը տեղի է ունեցել 893-894 թթ., որի հետևանքով ավերվել է Դվին քաղաքը[8]: Նա նաև ներկայիս գմբեթի վերակառուցման հնարավոր ժամանակաշրջան է համարում X դ., քանի որ այն իր ճարտարապետական հորինվածքով նման է X դ. կառուցված Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու գմբեթին[9]:

Եզրակացություն

Մեր կողմից փորձ է արվել, օգտագործելով ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաները, վերստեղծել Սբ. Հռիփսիմե տաճարի սկզբնական հորինվածքը: Իրականացվել է ճակատների չափագրում ֆոտոգրամմետրիկ եղանակով, որի հիման վրա ստեղծվել է եռաչափ

---

[8] **Еремян А.**, Храм Рипсимэ, стр. 55.

[9] Նույն տեղում, էջ 56:

տեսքը: Տաճարի գմբեթի տեսական վերակազմության համար ընդհանուր առմամբ հիմք են ընդունվել Ն. Տոկարսկու և Ա. Երեմյանի կողմից իրականացված 1946 թ., իսկ շքամուտքերի համար Ա. Երեմյանի կողմից արված 1955 թ. վերակազմությունները: Սակայն մեր իրականացրած վերակազմությունում կան որոշակի տարբերություններ: Ներկայիս արևելյան և հյուսիսային ճակատների աբսիդներն արտաքուստ և խորշերն ըստ Ա. Երեմյանի, հետագա վերակառուցման արդյունք են[10]: Սակայն սա ընդամենը հեղինակի ենթադրությունն է, և որևէ համոզիչ հիմնավորում չի ներկայացվել: Իսկ գմբեթը, որն իրականացված է ութանիստ և ութ լուսամուտներով, չունի իր նախադեպը, քանի որ Հայաստանում վաղ միջնադարում կառուցված ութանիստ գմբեթներն ունեցել են չորս պատուհան: Ըստ մեր տարբերակի՝ տաճարի ներկայիս բոլոր աբսիդները կառուցվել են եկեղեցու հիմնական ծավալի հետ միաժամանակ, և որևէ վերակառուցման ակնհայտ հետքեր չեն նկատվում: Գմբեթն իրականացված է ութանիստ թմբուկով և չորս պատուհաններով: Վեղարը, ի տարբերություն վերը նշված վերակազմության, իրականացված է ոչ թե կղմինդրածածկ, այլ բրգաձև և քարե սալերով ծածկված, ինչպես Օձունի, Ոսկեպարի և Լմբատավանքի գմբեթների վեղարներն են: Վերակազմվել են նաև տանիքների թեքությունները, որոնք բազմաթիվ վերակառուցումների ժամանակ փոխվել էին և աղավաղում էին տաճարի նախնական հորինվածքը: Փոփոխություններից զերծ չեն մնացել նաև պատերի խարիսխները՝ երեսպատվելով տրամատավորված քարե նոր երեսպատման շերտով: Արխիվային լուսանկարների հիման վրա վերակազմվել է նաև տաճարի եռաստիճան ստիլոբատը: Ընդհանուր առմամբ վերացվել են նաև բոլոր շինարարական միջամտությունների հետքերը՝ տաճարին վերադարձնելով երբեմնի սլացիկ և նրբագեղ հորինվածքը:

[10] Նույն տեղում, էջ 39-40:

Սբ. Հռիփսիմե տաճարը
հարավ-արևելքից
(վերակազմություն)

Սբ. Հռիփսիմե տաճարը
հյուսիս - արևմուտքից
(վերակազմություն)

РЕКОНСТРУКЦИЯ РАННЕСРЕДНЕВЕКОВОЙ КОМПОЗИЦИИ ЦЕРКВИ СВ. РИПСИМЕ

АРЕГ АСРАТЯН

В раннем средневековье архитектура в Армении переживала бурное развитие. Был возведен ряд церковных зданий оригинальных конструкций. Храмы типа церкви Св. Рипсиме строились не только в Армении и Арцахе, но и в Грузии. Церковь Святой Рипсиме расположена в северо-восточной части города Вагаршапат, на холме, на месте мученической смерти Рипсиме и других дев-христианок. По словам современника постройки, епископа Себеоса, храм был построен в 618 году, на 28-м году правления Хосрова II Парвеза. О строительстве есть две надписи, в которых упоминается имя Католикоса Комитаса Ахцеци как строителя храма.

Храм претерпел много этапов реконструкции и обновления.

1. В 1653 г. при Католикосе Филиппе I были отремонтированы кровля, большая часть облицовочных панелей, входы, алтарь, своды, к восточному фасаду пристроен притвор.

2. В 1790 г. при Католикосе Гукасе I на притворе была построена колокольня.

3. В 1898 г. при Католикосе Мкртиче I Хримяне были отремонтированы облицовка стен, пол, цоколь.

В плане строение представляет собой прямоугольник размерами 22,55x17,72 м., ориентированный по оси восток-запад.

Мы постарались воссоздать первоначальный проект Храма Св. Рипсиме с использованием современных компьютерных технологий. Обмер фасадов производился фотограмметрическим методом, на основании чего создавался трехмерный вид. Теоретическая реконструкция купола храма в целом базировалась на реконструкции Н. Токарского и А. Еремяна 1946 года, а реконструкция порталов – на реконструкции А. Еремяна 1955 года. В реконструкции, проведенной нами, есть определенные отличия. Апсиды и ниши современных восточного и северного фасадов являются результатом дальнейшей реконструкции А. Еремяна. Однако это лишь предположение автора, убедительного обоснования которому представлено не было. Восьмиугольный купол с восемью окнами не имеет прецедента, так как восьмиугольные купола в раннесредневековых постройках Армении имели четыре окна. По нашей версии, ввиду того, что явные следы реконструкции отсутствуют, все нынешние апсиды собора были построены одновременно с основным объемом храма. Купол опирается на восьмиугольный барабан с четырьмя окнами. В отличие от вышеупомянутой реконструкции, крыша покрыта каменными плитами, как крыши куполов Одзуна, Воскепара и Лмбатаванка. Были реконструированы и скаты крыш, изменившиеся в ходе многих перестроек и исказившие первоначальную композицию храма. Не избежали изменений и анкеры стен: вместо черепичной облицовки, они покрыты слоем терракотового камня. Трехъярусный стилобат храма также реконструирован по архивным фотографиям. Все следы строительных вмешательств устранены. Храму возвращена его некогда стройная и изящная композиция.

Ключевые слова: Св. Рипсиме, храм, реконструкция, купол, Эчмиадзин, раннее средневековье, гробница.

RECONSTRUCTION OF THE EARLY MEDIEVAL COMPOSITION OF SAINT HRIPSIME CHURCH

AREG HASRATYAN

In the Early Middle Ages, architecture in Armenia experienced rapid development. A number of original constructions of church buildings were erected. Temples of the type of St. Hripsime Church were built not only in Armenia and Artsakh, but also in Georgia. St. Hripsime Church is located in the north-eastern part of the city of Vagharshapat, on the hill, where Hripsime and other Christian virgins were martyred. According to Bishop Sebeos, a contemporary to the construction, the temple was built in 618, in the 28th year of the

reign of Khosrov II Parvez. There are two inscriptions about the construction with the name of Catholicos Komitas Aghtsetsi as the builder of the temple.

The temple has undergone several stages of reconstruction and renovation.

1. In 1653, in the days of Catholicos Philip I, the roof, most of the cladding panels, the entrances, the altar and the vaults were repaired, and a porch was built adhering to the eastern facade.

2. In 1790, in the days of Catholicos Ghukas I, a bell tower was built on the porch.

3. In 1898, in the days of Catholicos Mkrtich I Khrimyan, the wall cladding, floor and the plinth were repaired.

The building is an east-west oriented rectangle measuring 22.55 x 17.72 m.

We used modern computer technologies to recreate the original design of St. Hripsime Church. Measurement of the facades was carried out by photogrammetric method, based on which a three-dimensional view was created. The theoretical reconstruction of the dome of the temple was based on the reconstruction of N. Tokarsky and A. Yeremyan, made in 1946, and the reconstruction of the porches – on A. Yeremyan's reconstruction, made in 1955. There are certain differences in the reconstruction that we have done. The apses and niches of the present eastern and northern facades are the result of Yeremyan's further reconstruction. However, this is only the author's assumption, as no convincing grounds are provided. The octagonal dome with eight windows has no precedent, since the octagonal domes in Early Medieval Armenian buildings had four windows. According to our version, given that there are no obvious traces of any reconstruction, all the current apses of the cathedral were built concurrently with the main volume of the church. The dome rests on an octagonal drum with four windows. Unlike the above-mentioned reconstruction, the roof is covered with stone slabs, like the roofs of domes of Odzun, Voskepar and Lmbatavank churches. The slopes of the roofs, which had changed during the many reconstructions and distorted the original composition of the temple, were also reconstructed. The anchors of the walls underwent some alterations, in particular, instead of tiles, they were faced with a layer of terracotta stone. The three-tiered stylobate of the temple is reconstructed based on the archival photographs. All the traces of constructional interventions are removed, and the temple regained its once slender and graceful composition.

Key words: St. Hripsime, temple, reconstruction, dome, Ejmiatzin, early medieval, tomb.